

“ԴՈՒ ՄԵՆԱԿ ՉԵՄ” ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ  
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



“ YOU ARE NOT ALONE” ANTICORUPTION  
LAW PROTECTION NON GOVERMENTAL  
ORGANISATION

ՀՀ ք.Ստեփանավան, Հ.Սեղապարտի 6, РА, г.Степанаван, А.Мегһарта 6, RA, Stepanavan, H.Meghparth 6

☎ (37491) 33-66-00, (374256) 2-37-43

E-mail: anikoghosyan@mail.ru

ՀՀ Արմավիրի մարզպետ  
պարոն Հ.Մաթևոսյանին

«10» 07 2020թ.

N 07/13

Հարգելի պարոն Մաթևոսյան

Ի պատասխան Ձեր 04.06.2020թ. թիվ 01//03247-2020 գրության հայտնում ենք, որ մեր կողմից խնդրված տեղեկատվությունը չի հանդիսանում ոչ պետական կամ ծառայողական գաղտնիք և ոչ էլ անձնական տվյալ, հետևաբար Ձեր վկայակոչած իրավական նորմերի դրույթները տվյալ պարագայում կիրառելի չեն:

Ելնելով վերոգրյալից կրկին անգամ խնդրում ենք Ձեզ տրամադրել Արմավիրի, Մեծամորի, Էջմիածնի բժշկական կենտրոնների, Վաղարշապատի հիվանդանոցի, Հիսուսի մանուկներ առողջության կենտրոնի զարգացման ծրագրերը, դրանց տնօրենների ընտրության մրցույթի արդյունքում, մրցույթի հաղթող ճանաչելու մասին մրցութային հանձնաժողովների որոշումների և եզրակացությունների պատճենները, ինչպես նաև վերոհիշյալ բուժհաստատությունների տնօրենների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը, որոնք ողջամտորեն պետք է, որ գտնվեն ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տիրապետման ներքո:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով

ՀԿ հիմնադիր նախագահ

Ա. Նիկողոսյան